ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, (060) 46-47-37 kotayq.zoravan@mta.gov.am, zoravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանի N 1 հավելվածով, 13-Ն հրամանի հավելվածով. **որոշում եմ՝**

1. 2017 թվականի հունիսի 27-ին ժամը 11:00-ին հայտարարել մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմի հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար. 1/Կոտայքի մարզի Զորավանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր՝ 3.1-1/:

2.Հաստատել մրցույթի հայտարարությունը համաձայն հավելվածի:

3.Մրցութային հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկման լիազորությունները և նախապատրաստական աշխատանքների իրականացման պատասխանատվությունը վերապահվում է աշխատակազմի քարտուղար Անուշ Մնացականյանին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

2017 թ. մայիսի 20
գ. Զորավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, (060) 46-47-37 kotayq.zoravan@mta.gov.am, zoravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 24

«ՄԱՔՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԶՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի մայիսի 2-ի N 86-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից հաստատված «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի մայիսի 17-ի N 01/18,1/2963-17 հանձնարարականը՝ **որոշում եմ.**

1.«Մաքուր Հայաստան» ծրագրի պահանջների իրականացման ինչպես նաև համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման ապահովման ուղղությամբ կատարվող աշխատանքների կոորդինացման և հսկողության համար ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

1) Միերյան Աբրահամ – համայնքի ղեկավարի տեղակալ- աշխատանքային խմբի ղեկավար
2) Խանաղյան Վանիկ- կոմունալ ծառայության աշխատակից
3) Քեթցյան Էդվարդ –աշխատակազմի առաջատար մասնագետ
4) Քեթցյան Զաբել – առաջին կարգի մասնագետ
5) Խաչատրյան Կիմա- առաջին կարգի մասնագետ
6) Թովմասյան Սրապ - համայնքի ավագանու անդամ
7) Զիլիֆյան Մնացական- համայնքի ավագանու անդամ

2. 2017 թվականի մայիսի 27-ին Զորավան համայնքի վարչական տարածքում անցկացնել համայնքային շաբաթօրյակ:

3. Աշխատանքային խմբի ղեկավարին՝

1)Կենտրոնացնել աշխատանքային խմբի ուժերը համայնքում աղբահանության և սանիտարական վիճակի բարելավման ուղղությամբ խոչընդոտները բացահայտելու և վերացնելու, բնակչության շրջանում համայնքը մաքուր պահելու շահագռգռվածություն և պատասխանատվություն ձևավորելու համար.

2) Աշխատանքների բարելավման ուղղությամբ առաջացած խնդիրների լուծման նպատակով առաջարկությունների մասին պարբերաբար տեղեկացնել համայնքի ղեկավարին.

3)Համակարգել, իրականացնել և վերահսկել շաբաթօրյակը անցկացնելու աշխատանքները և ամփոփել արդյունքները:

4.Համայնքի տարածքում գործող հիմնարկ-ձեռնարկությունների, ընկերությունների և տնտեսվարող այլ սուբյեկտների ղեկավարներին՝ շաբաթօրյակի ընթացքում մաքրել, բարեկարգել, կանաչապատել իրենց տարածքները և շրջակայքը:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

2017 թ. մայիսի 20
գ. Զորավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, (060) 46-47-37 kotayq.zoravan@mta.gov.am, zoravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 25

ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղականինքնակառավարմանմասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի առաջին մասի և 46-րդ հոդվածի առաջին մասի՝ **որոշում եմ.**

1.Վերջին զանգի կապակցությամբ «Զորավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շրջանավարտներին միջոցառում կազմակերպելու համար տրամադրել 70.0 (յոթանասուն հազար) դրամի չափով օգնություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

2017 թ. մայիսի 24
գ. Զորավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, (060) 46-47-37 kotayq.zoravan@mta.gov.am, zoravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 26

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի, համայնքի ավագանու 2011 թվականի ապրիլի 21-ի թիվ 16 որոշման պահանջներով՝ **որոշում եմ.**

Զորավան համայնքի ընտանիքի անդամը կորցրած ընտանիքներին տալ միանվագ դրամական օգնություն, համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

2017 թ. մայիսի 24
գ. Զորավան

Հավելված N 1
Զորավան գյուղական համայնքի ղեկավարի
2017 թվականի մայիսի 24-ի N 26 որոշման

N	Ազգանուն, անուն, հայրանունը	Գումար
1	Աֆյան Յուրի Վլադիմիրի	25 000
2	Գևորգյան Գեղամ Գևորգի	25 000
	Ընդամենը	50 000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զորավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Զորավան, (060) 46-47-37 kotayq.zoravan@mta.gov.am, zoravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 27

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 43[1] հոդվածի 3-րդ մասի և 288 հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնի պետի 2017 թվականի մայիսի 20-ի N 67-7/1-2116 գրությունը՝ **որոշում եմ.**

1.Չսահմանված և չնախատեսված տեղերում ու վայրերում աղբ թափելու համար Աշոտ Վոլոդյայի Ղուկասյանի նկատմամբ կիրառել վարչական տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ 20000 ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աշոտ Վոլոդյայի Ղուկասյանին օրենքով սահմանված կարգով սույն որոշման ընդունման մասին ծանուցելու հաջորդ օրվանից:

3.Սույն որոշումը կարող է բողոքարկվել այն հանձնելու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱՂԴԱՍԱՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

2017 թ. մայիսի 25
գ. Զորավան